

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Թե ինչպէ՛ս ե՞ն սպւում Զինաց լրագիրները.— Ինչպէ՛ս որ տա-
բօրինակ առանձնայաակութիւններով հարուստ է երևում մեզ
հեռաւոր և օտար Զինաստանը ու նրա քաղաքակրթութիւնը,
այնպէ՛ս էլ ինքնուրոյն և մեղ համար օտարոտի կազմութիւն ու-
նի նրա ընակիւնների լեզուն: Պրոֆեսսոր Դուգլաս կարճ և յաջող
կերպով այսպէ՛ս է ընորոշում չինարէնը. «Ամէն մի բառ արտա-
յայտում է որևէ հիմնական միտք. մէջ հոլովում կայ և ոչ էլ մի-
ջոց առանձին բառերը շաղկապելու իրար հետ. բայերը չեն խո-
նարհւում. մի խօսքով՝ չինարէնը կարծես մի վիթխարի այբուբէն
լինի: Աւելացնենք և այն, որ բառերը միշտ միևնոյն նշանակու-
թիւնը չունին. միևնոյն բառը յաճախ 5—10 բոլորովին տարբեր
մտքեր է արտայայտում. իւրաքանչիւր առանձին դէպքում բառի
նշանակութիւնը կախուած է նախադասութեան մէջ նրա ունե-
ցած տեղից. ուստի չինարէնի մէջ բառերի դասաւորութեան
կանոնները շատ ճիշտ որոշուած են, որ պիտի անպատճառ
լմանալ: Մանաւանդ չինարէնի այս եղանակն յատկութիւնները
գրաւոր լեզուի մէջ նկատելի են. բառեր կազմելու համար
տառեր չեն գործածում, այլ իւրաքանչիւր առանձին բառի
համար առանձին նշանագիծ կայ: Այս պատճառով տպա-
գրութիւնը Զինաստանում երկար ժամանակ մուտք չէր գըտ-
նում: Բոլոր գրքերը, լրագիրները, կառավարչական կարգա-
գրութիւնները և այլն՝ ձեռագիր էին: Որովհետեւ չինարէն գրեւ
—կարգաւ սովորելու համար երկար աշխատանք և հմտութիւն է
պահանջւում, ուստի ամէն մի դրուած թղթի կտոր Զինաստանում
մեծ յարգ ունի. ոչ մի չինացի չի պատուի կամ դէն չի ձգի այս-
պիսի մի թուղթ: Եւ զարմանալու բան չկայ այստեղ. միմիայն
հասարակ գրել—կարգաւ սովորելու համար Երկնային թագաւո-
րութեան դժբաղդ զաւակները ամբողջ հինգ տարի չարչարւում
են:

Սիւայն վերջին ժամանակներս չինացիներն ունեցան տպուած
լրագիրներ, մանաւանդ Վալիֆորնիայում, ուր բաղմաթիւ չինա-
ցիներ են ապրում: Այստեղ հիմա հրատարակւում են երեք լրա-
գիրներ, որոնցից մէկն ամենօրեայ է: Դժուար չէ հասկանալ,
թէ մի այսպիսի լեզուով տպագրութեան հետ ինչպիսի դժուա-
րութիւններ են կապուած, որտեղ ամէն մի նոր բառ նոր տառ

է: Չինարէնի տպարանը, և մանաւանդ շարելը, սովորականից շատ տարբեր են: Բաւական է ասել, որ մինչ եւրոպացի դրաշարը պիտի ճանաչէ ընդամէնը 30—40 տառ և մի 10 հատ էլ կէտագրութեան նշաններ, չինացի դրաշարը 11000 նշանագրերի հետ պիտի գործ ունենայ, որոնցից ամէն մէկը մի քանի միտք է արտայայտում: Ի նկատի պէտք է ունենալ նաև, որ մեծ մասամբ մի որ և է չնչին կլոր նշան, խազ, ծուռ գլիծ կամ կէտ մէկ «տառ» միւսից տարբերող միակ նշան է: Տպագիր նշաններն այս վիթխարի պահեստը տեղաւորուած է այնպիսի պահարանների մէջ, որոնք բռնում են մի ընդարձակ սրահ: Եւ մինչև անգամ զարմանալի է, թէ ինչպէս առհասարակ տպագրական նշանագրերի այս ծովի մէջ դրաշարը կարողանում է գտնել հէնց այն նշանագրերը, որ նրան հարկաւոր են: Նշանագրերն ի հարկէ այլընտանական կարգով չեն դասաւորուած—և միթէ որեւէ այլ բան նրան կարելի է այստեղ երևակայել, քայքայ որոշեալ կարգ ու կանոն դարձեալ կայ. նրանք դասաւորուած են այն հասկացողութիւնների համեմատ, որ իրենք արտայայտում են: Այսպէս, կենդանիների բոլոր անունները մի տեղ են դասուում. նման կերպով մի տեղ են հաւաքուած նաև բոյսերի անունները, և այլն. «ծուկ» նշանագրերի մօտ պիտի որոնել նաև «թեփ», «լողանալը», «լուղորդ» ևլն: Իլ չխօսենք, որ այսպիսի աշխատանքը դրաշարից պահանջում է մեծ փորձառութիւն և տեղեկութիւնների ահագին պաշար: Դա միևնոյն ժամանակ ֆիզիքայէս շատ յոգնեցնող աշխատանք է. ընդարձակ սրահում շարունակ դէս ու դէն պիտի վազվզել՝ երբեմն այս պահարանի, երբեմն այն պահարանի մօտ գնալ, պէտք է երբեմն վերև բարձրանալ, երբեմն էլ մինչև գետինը կռնալ, ցանկացած նշանագիրը գտնելու. և այս բոլորը պէտք է մի օրուայ մէջ վերջացնել, որպէս զի ամեն օրեայ թերթը ժամանակին լոյս տեսնէ:

Անքել Կեռագրի Կերկայ վիճակը.—Թէպէտ եւրոպական շատ երկրներում ընդունում են, որ անթել հեռագիրն առաջին անգամ ռուս ընադէտ Պուտովը գտաւ, այնուամենայնիւ Մարկոնիի ընկերութիւնն աշխատում է իւր ձեռքում կենտրոնացնել և շահագործել նոր գիւտը, ամենուրեք կացարաններ հաստատելով: Փորձերից յայտնի է, որ հեռագիրներն օդի միջոցով պարզ և ճիշտ հաղորդւում են մինչև 110 վերջա հեռաւորութեան վրայ, իսկ 180 վերջաւոր աւելի տարածութեան վրա՝ դառնում են անորոշ և անճիշտ. թէպէտ խալաիկան մի նաւով

կատարած փորձերից երեաց, որ հեռաւորութիւնը կարելի է մինչեւ 900, և մինչեւ անգամ 1500 վերստ հասցնել: Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ լեռներն ամենևին չեն խանգարում էլեքարական ալիքների անցնելուն: Ինչ վերաբերում է անթել հեռագիրը պատերազմական և առևտրական նաւատորմիչներին համար գործադրելուն՝ պէտք է ասել, որ թէպէտ մի քանի փորձեր յաջող են եղել, բայց կան հանգամանքներ, որ ստիպում են հրաժարուելու այս գիւտի գործադրութիւնից: Բանն այն է, որ հաղորդուող հեռագիրները միջանկեալ կայարաններում կարող են բռնուել. այսպէս օրինակ Անգլիայում իտալական նաւին հեռագիրներ ուղարկող ծովեղերեայ կայարանից 25 վերստ հեռաւորութեան վրայ մի ուրիշ կայարան շինուեցաւ, որ առանց դժուարութեան բառ առ բառ բռնում էր իտալական շոգենաւին ուղարկուած ըոլոր հեռագիրները: Մի ուրիշ անյարմարութիւն էլ այն է, որ երբ մի զօրեղ կայարանից 100 վերստ հեռաւորութեան վրայ էլեքարական ալիքներ են ուղարկուած, աւելի թոյլ կայարանների գործունէութիւնն ըստ ինքեան կլիանգարուի. սրանք ստիպուած կլինեն մեծ կայարանի հեռագիրներն ընդունել: Գրա փոխարէն խիստ նպատակայարմար կլինի ծովեղերեայ տեղերում, փարոսներում և վտանգաւոր վայրերում փոքրիկ կայարաններ հիմնել: Հեռագրական ապարատներ ունենալով՝ շոգենաւները կկարողանան 100 վերստ հեռաւորութիւնից ոչ միայն ափի հետ հաղորդակցութիւն ունենալ, այլ և մառախուղների և փոթորիկների ժամանակ վտանգաւոր տեղերից կանխազգուշութիւններ կստանան: Սրա համար կայարաններում պէտք է շինել անընդհատ գործող ինքնաշարժ հեռագրական ապարատներ. նաւերը մառախուղի ժամանակ, նրանց գործունէութեան սահմանը մտնելիս, գեո 100 վերստ հեռաւորութիւնից վտանգի մասին տեղեկութիւններ կստանան:

Շինութիւնների տեղափոխութիւնն Ամերիկայում.—Ամերիկայում շատ յաճախ պատահում է, որ ամբողջ աներ և շինութիւններ մի տեղից միւս տեղն են փոխադրուած, երբեմն մինչև մի քանի հարիւր մետր հեռաւորութեան վերայ: Կանկինների համար աները «անշարժ կայք» չեն: Մի քանի ժամանակ առաջ Չիկագոյում հետեւեալ դէպքը տեղի ունեցաւ: Մի հոյակապ հիւրանոցի տէրը ցանկանում էր, որ իւր շինութիւնն աւելի առատ լոյս ստանայ, բայց որովհետեւ մօտը դռնուող բարձր ե-

Կեղեցին խանդարում էր, վճռեց եկեղեցին փոքր ինչ հեռու քաշել: Եկեղեցին մի մեծ շինութիւն էր, 40 սափէն բարձրութիւն ունեցող աշտարակով. չնայած այս դժուարութիւններին, հիւրանոցատէրը տեղափոխութեան բոլոր ծախսերը ինքը յանձն առաւ և գործը յաջողութեամբ գլուխ բերեց: Եկեղեցին հիւրանոցից 16 սափէն հեռու քաշուեցաւ, որով և միաժամանակ առաջուանից մի սափէն վերև բարձրացաւ: Այս իրողութիւնը ցոյց է տալիս, թէ որչափ արտասովոր զիմացկանութիւն ունին ամերիկական շինութիւնները. անշուշտ տեղափոխութեան ժամանակ ցնցումներ և հարուածներ կլինէին, որոնց մեր աշխարհի շինութիւնները մի րոպէ անգամ չէին դիմանայ:

Անգլիայի քաղաւորի Հնդկաստանի կայսր հռչակուելը. — Անցեալ յունուարի 1-ին, նոր տոմարով, Հնդկաստանի ամենահին մայրաքաղաքում, Գելհիում, մի հազուադէպ հանգէս տեղի ունեցաւ — Անգլիայի եղուարդ է թագաւորը Հնդկաստանի կայսր հռչակուեց: Բուն հանգէսը շատ պարզ ձևով կատարուեց. պալատի դահլիւզում հնդկի թագաւորների (բաջաներ, մադարաջաներ, նաւաբներ) ներկայութեամբ Հնդկաստանի փոխարքան, Լօրդ Կըրզոն՝ թագաւորին կայսր անուանեց: Բայց այս յայտարարութիւնից յետոյ այնպիսի փարթամ, այնպիսի շուայլ տօնակատարութիւններ տեղի ունեցան, որպիսիք միայն Հնդկաստանի պէս հարուստ, հեքիաթների աշխարհում կարող են կատարուել:

Հանգէսին հաւաքուել էին մի քանի հարիւր հնդկի իշխաններ՝ իրանց ազգային հազուստներով, զարդարուած թանկագին քարերով. իշխաններից ամէն մէկը բաղմամարդ շքախումբ ունէր՝ որը խալաթ էր հագել, որը միջնադարեան զրահ և սաղաւարտ: Նրանցից մի քանիոր գեղեցիկ, զարդարուած ձիերի վրայ էին նստած, մնացածները՝ թանկագին կերպաններով զուգած փղերի վրայ:

Շուտով հանգէսից յետոյ հնդկի առաջնորդները մի յաղթական գնացք կազմեցին, որ պիտի անցնէր Գելհիի փողոցների միջով: Ամէնից առաջ գնում էին փոխարքայի և եղուարդ թագաւորի եղբօր՝ Կօննաուտեան գուքսի (որ յատկապէս հանգէսի համար Անգլիայից եկել էր) շքեղ զարդարուած փղերը: Հանդիսաւոր ելքից յետոյ սկսուեցան ուրախութիւններ, զօրահանգէսներ, ժողովրդական ներկայացումներ, և այլն:

Այս շքեղ հանդէսներին ահանառակ եղողը լցւում է պատկառանքի զգացումով դէպի Անգլիան, որ ընդարձակ տարածութեան վրայ սիւսուած 300 միլիոն ժողովուրդ է հառաւարում: Ի նկատի առնելով երկրի ընդարձակութիւնը և աղքատահուծեան ահագին թիւը, հառաւարութիւնը շատ քիչ զօրք է պահում այնտեղ, ընդամէնը 220,000 զինուոր, որի 2/3 մասը բնիկներ են: Եթէ Հնդկաստանի բնակիչները բազմաթիւ ցեղերի բաժանուած չլինէին, դժուար կ'լինէր հնդկիկներին հպատակութեան մէջ պահել: Այստեղ գեռ 70 միլ. ժողովուրդ իւր սեփական իշխաններն ունի, որոնք Անգլիայի գերիշխանութեանն են ենթարկուում միայն և պահում են առանձին զօրք: Անգլիացիք շատ լաւ հասկանում են այս և ամենևին չեն աշխատում 117 ցեղերի բաժանուող աղքատակութիւնը մի ազգ դարձնել: Նրանց իշխանութեան համար նպաստաւոր է նաև այն հանգամանքը, որ Հնդկաստանում շատ կրօններ կան. բրահմինականութիւնը մի քանի աղանդների է բաժանուած և մօտ 200 միլիոն հետևողներ ունի, կան 60 միլիոն մահմեդականներ, մնացածները բուդդայական են, բրիտանացի կամ կրակապաշտ. որոնք դէպի իրար անհաշտ ատելութիւն են տածում:

Հնդկիկները թէպէտ չեն սիրում անգլիացիներին, բայց վախենում են և յարգում: Սոքա տիրելով հարուստ Հնդկաստանին, ամէն կերպ աշխատում են կրթութեան ծաւալը ընդարձակել երկրի մէջ: Հնդկաստանում այժմ 127 բարձրագոյն կրթութարաններ կան. 800 միլիոն բուրլի ընդհանուր եկամուտից ժողովրդի կրթութեան վրայ ծախսում է 25 միլ. բուրլի, մինչդեռ Ռուսաստանում 1,780 միլիոնից միայն 33 միլ. է ծախսում: Անգլիացիք զարգացրին և բարեփոխեցին դատարանները և առանձին հսկողութիւն սահմանեցին ժողովրդի առողջապահութեան վրայ. պաշտպանեցին ժողովրդի շահերը բաջինների նախկին կամայականութիւնների դէմ: Ինչ էլ որ ասելու լինեն անգլիացիների հառաւարութեան մասին, բայց իրողութիւն է, որ հասարակ հնդիկ ժողովուրդը հիմա աւելի լաւ է ապրում, քան առաջ, երբ հարազատ արիւնակից հառաւարիչները կողոպտում էին նրանց, իսկ իրանք անմիտ շռայլութեամբ յագեցնում: Հիմա այդ բոլորը անցած է համարում: Հնդկացիները մի քանի դատակարգեր եւրոպական քաղաքակրթութիւնը իւրացրին, որ գնալով հասարակ ժողովրդի մէջ էլ համակրողներ է գտնում: Անգլիացիք հնդկիկներին առաջ մինչև անգամ բարձր կառավարչական պաշտօններ ստանալու ճանապարհը չեն փակում: Ներկայումս բուն բրիտանական կալուածներում հնդկիկներն աւելի

լաւ են ապրում, քան ընկիւնների աւատական տէրութիւններէ մէջ, որտեղ առաջուայ պէս վայրենի կամայականութիւնն և կոպիտ ոյժն են գործում:

Արգենտինայի նոնուոյ ժայռը. — Մանրագիտականներն և հեռագիտականներն շնորհիւ բաղմամբիւ զարմանահրաշ երևոյթներ ենք տեսնում. բայց հասարակ աչքով տեսնուող բաներն ևս բաւական են համոզելու, թէ մեզ շրջապատող բնութիւնը լի է ամենազարմանալի հրաշքներով: Յատկապէս աշխարհիս չորս կողմը պատուողներն առաջ հանդէս են դալիս նոր ի նորոյ առասպելական երևոյթներ: Սրանցով հարուստ է մանաւանդ Ամերիկան, որ բնագիտական տեսակէտից շատ աւելի պահաս է ուրումնասիրուած, քան Հին աշխարհը: Ահա մեր առաջն է բնութեան խաղերից մէկը—ձօճուող ժայռը. նա գտնուում է Բուէնոս—Այրէսի շրջակայքում, Տանդիլ գիւղում. տեղացի բնակիչները նրան կոչում են «պիէզրա մօրէզիոս»: Շատ դարեր են անցել, բայց այս քարաժայռը, որ մօտ 20,000 փութ ծանրութիւն և երեք սաժեն բարձրութիւն ունի, գտնուում է միևնոյն տարօրինակ դրութեան մէջ: Ժայռի հիմքը շատ հարթ է, իսկ ինքն ամբողջութեամբ նման է թնդանօթի ռումբին: Զարմանալի է, որ ժայռը թէպէտ դէպի անդունդ է թեքում և ոչ մի բանով հողին կպած չէ, այնուամենայնիւ չի գլորւում ներքև և քամուց էլ չի վայր ընկնում: Բացի սրանից, այս ժայռը հանգիստ չի մնում, այլ անդադար ձօճանակի նման ձօճւում է մի կողմից միւս կողմը: Այս տատանումները հաւատար են և այնքան դանդաղ են կատարւում, որ շատ մօտ կենալով իսկ անմիջապէս չի կարելի նկատել: Բայց բաւական է միայն ժայռի տակը, յենման կէտի մօտ, մի շիշ դնել, և մի քանի րոպէից յետոյ կլսուի շշի ճայթոցը, երբ ծանր ժայռը այն կողմը կթեքուի: Իսկապէս հազուագիւտ չեն ձօճուող քարերը, բայց Սրգենտի—նիայի ժայռը զարմանալի է նրանով, որ ինքն իրան է ձօճւում, ոչ մի արտաքին ոյժ հարկաւոր չէ նրան հաւասարակշռութիւնից հանելու համար: Թէ ինչն է այդպիսի ինքնաբերական ձօճումների պատճառը, որոշ յայտնի չէ: Ամենայն հաւանականութեամբ նոքա առաջ են դալիս այն պատճառաւ, որ արեգակի ճառագայթները հաւասար չափով չեն տաքացնում ժայռը, իսկ սրան էլ հետեւում է քարի զանազան մասերի անհաւասար լայնացումը: Այսպիսի անհաւասար լայնացումը առաջացնում է ծանրութեան կենտրոնի տեղափոխութիւն, և սրովհետեւ ժայռը միայն մի տեղից է յենուած լինում, ուստի բնականա-

բար թեքւում է դէպի այն կողմը, ուր ծանրութեան կենտրոնը տեղափոխուեց: Բայց հէնց որ հաւասարակշռութիւն է լինում, տաքանալու շնորհիւ՝ ծանրութեան կենտրոնը նորից տեղափոխւում է, և ժայռը շարունակում է ձօճումը: Սրանով պիտի բացատրել ժայռի անընդհատ ձօճումը, առանց արտաքին տեսանելի պատճառի: Այստեղ ուշադրութիւն պիտի դարձնել նաև ընդհանրապէս հազուադէպ երեոյթի վրայ, որ արեւի ճառագայթների տաքութիւնը անմիջապէս շարժում է յառաջ բերում:

Արդեօք կենդանիները պահպանեցին մասին հասկացողութիւն ունի՞նք. — երեւի շատերը կիմանան Ապելլէս նկարչի և Աղէքսանդր Մեծի մասին եղած պատմութիւնը: Իբր թէ թագաւորը դժգոհ է մնացել մեծ արուեստագէտի նկարից, մինչդեռ նրա Բուցեֆալը նոյն նկարը տեսնելով՝ բարձր խրանջում է, և նկարիչը վրայ է բերում. «Տէ՛ս, արքայ, քո ձին դեղարուեստից շատ աւելի է հասկանում, քան դու» ... Եթէ այս պատմութիւնը ճիշտ է, որի համար սակայն շատերը կասկածում են, ապա պէտք է եզրակացնենք, որ Ապելլէսը, թէկուզ երեւելի նկարիչ՝ շատ քիչ հասկացողութիւն է ունեցել կենդանիների մասին: Անմտութիւն է կարծել, որ ձիերը, այնքան կարճատես լինելով հանդերձ, հնարաւորութիւն կունենան պատկերի բոլոր մանրամասնութիւններն որոշելու: Իսկ թէ նոքա յերաւի շատ վատ են տեսնում, ապացոյց հէնց միայն այն հանգամանքը, որ ձի գնելիս հեշտութեամբ կարելի է խաբուել և կոյր ձի գնել: Ձիու համար տեսողութիւնն այնքան քիչ նշանակութիւն ունի, որ կոյր էլ լինելով նա կարող է իւր գործը բաւարար չափով կատարել: Ամէնքին յայտնի է, որ ձիերը երկշոտ են, և այս յատկութիւնը առաջանում է տեսողութեան պակասութիւնից. իսկապէս նրանք ընդթիւնից վախկոտ ստեղծուած չեն. նրանք օրինակի համար վախենում են ճանապարհի վրայ եղած քարակոյտից, որովհետեւ պարզութեամբ չեն կարողանում որոշել, թէ ինչ է, և մի ուրիշ բանի տեղ են դնում: Ընդհանրապէս ընդթիւնը ոչ մի կենդանու աւելի բան չի տալիս, քան նրան անհրաժեշտ է. այն կենդանին, որ եղջիւրներ ունի, սուր ատամներ չունի, և ընդհանրապէս՝ ամուր և սուր ատամներ ունեցող գաղաննները պողերից դուրի են: Նոյնը կարելի է ասել նաև արտաքին զգայարանների մասին. պատուական տեսութիւն ունեցող արարածները՝ կապիկները, լուսանները, թռչունները դուրի են նուրբ հոտառութիւնից, մինչդեռ լաւ հոտառելիք ունեցող կեն-

դանինները՝ շուներ, փիղը, եղջերուն, նապաստակը միշտ կարճատեւ են լինում: Այսպիսով կենդանիներից մի քանիսի համար, նրանց հետ նաեւ մարդու, արտաքին դիտաւոր դժայարանը տեսողութիւնն է. տեսողութեան տարւորութիւններով են նրանք արտաքին աշխարհի մասին հասկացողութիւն կազմում, իրենց մտաւոր պաշարը ստանում: մինչդեռ ուրիշ կենդանիների համար կենսական նշանակութիւն ունի հոտառութեան դժայարանը, որ և ղեկավարում է նրանց՝ ամբողջ կեանքի ընթացքում: Նրանք հոտառութեան պատկերացումներով են առարկաների մասին գաղափար կազմում: Վերցնենք օրինակի համար շուներ: Թէ հոտառութիւնը որքան ահազին դեր է խաղում նրա կեանքում, այդ պարզ երևում է հետևեալ փորձերից: Մի քանի շան լսկոտներին հոտառութեան նետարդերը կարտեցին, և այդ նրանց ամբողջ կեանքի վրայ օրհասական ազդեցութիւն ունեցաւ: Լսկոտները առաջ ողջ—առողջ ողում էին բնի մէջ, բայց յետոյ իրանց մօր ծծերն այլ ևս չէին կարողանում գտնել, այնպէս որ ստիպուած եղան արհեստական եղանակով կերակրել: Նրանք, օրինակի համար, աշխատում էին տաքացրած գառան մորթի ծծել, իսկ մօր մօտիկութիւնը միայն խարխալելով էին իմանում: Երբ այնքան մեծացան, որ կարող էին վազվզել, նրանք առաջին անգամից մոլորուեցան և այլ ևս չկարողացան իրանց բունը գտնել: Չէին կարողանում միտք հացից որոշել և անխտիր երբեմն առաջնին էին դերադասութիւն տալիս, երբեմն երկրորդին. ամենաթունգ հօտի համար անգամ բոլորովին անդգայ լինելով՝ չէին նկատում ծծմբախառն թթուուտ, էֆիր, և հեշտութեամբ խաբւում էին: Բայց որ ամէնից աւելի զարմանալի է՝ նրանք մեծանալով հաւատարմութեան և սիրոյ նշոյլ անգամ չէին տածում գէպի մարդիկ, որ այնքան յատուկ է առհասարակ բոլոր շներին:

Այս օրինակը պարզ ցոյց է տալիս, թէ սովորաբար ինչպիսի կոպիտ սխալների մէջ ենք ընկնում, երբ կենդանիներին մարդկային զգացմունքներ և դատողութիւն ենք վերագրում: Շան մտաւոր հասկացողութիւնների կազմակերպութիւնը բոլորովին ուրիշ է, քան մարդու. շրջապատող առարկաների իրանց յատկութիւնների համեմատ դատաւորութիւնը այլ է մարդու համար, այլ է շան համար: Մենք առարկաների մասին դատողութիւն ենք տալիս տեոանելի նշանների համեմատ, իսկ շուներ՝ հոտառութեան. ուստի համկանալի է, թէ ինչո՞ւ մեր արտաքին աշխարհը տարբեր պիտի լինի շան արտաքին աշխարհից. և այս բոլորը նրանից է ծագում, որ զգայարաններից մենք միայն տեսանելիքն ենք զարգացրել, իսկ շները՝ հոտառելիքը: Ամէնքը գիտեն,

որ մթութեան մէջ էլ շունը իւր տիրոջը ճանաչում է, և հասկանալի է թէ ինչու. մթութիւնն ամենեւին չի թուլացնում այն մեր զգայարանքների համար անբնական ինքնաբերական արտաբերումները, որոնց հոտն առնելով շունը խիստն որոշում է մարդու ու լինելը: Շունն առանց գիտարութեան ճանաչում է տիրոջը նաև այն ժամանակ, երբ վերջինս բոլորովին մերկ է, կամ բոլորովին չափած նոր շոր է հագել: Բայց երբ շան տէրը իւր բարեկամը շորը հագնի, շունը անձանօթ հոտն առնելով կմօլորուի և կսկսի շուարած հոտոտել իւր տիրոջը: Այս բոլորը պէտք է ի նկատի ունենալ, որպէս զի աւելի ուղիղ գաղափար կազմենք շան հոգեբանութեան մասին:

Նախ հետաքրքրական է նաև կենդանիներ սիրողներից մէկի պատմութիւնը, որ ի պատասխան նրա արծարծած հարցի, թէ կենդանիները քնդունա՞նք են զարմանալու, տպուել է արտաոսմանեան լրագիրներում:—«Ես մի տախտան շան լակոտ բերի տուն և սկզբից սկսեցի հետեւել նրան: Ինչպէս յայտնի է, տախտանները ամենախելօք շներն են: Աղբում ոչ մի բան նրա ուշադրութիւնը չէր գրաւում. առաջին զարմանքը նա արտայայտեց ... կաղամբի նկատմամբ. երբ խոհարարուհին սկսեց փետել այս սարսափելի, փաթաթուած, կլոր առարկան, միանգամից զօրեղ տպաւորութիւն գործեց լակոտի վերայ. նա հաչելով յարձակուեցաւ դէպի կաղամբը, բայց և այնպէս չէր համարձակուում մօտենալ սառը քայլից աւելի: Երբ կաղամբը նորա կողմը գլորեցին, շունը երկնդից սենեակի անկիւնը քաշուեց: Զանգալն էլ սկըզբում սաստիկ զարմացրեց նրան. զանգի ձայնը լսելով, շունը նստեց բազմոցի վրայ և զարմացած աչքերով սկսեց դիտել սեղանի վրայ դրած զանգակը. երբ որ զանգը երկրորդ անգամ ձայն հանեց, նա սկսեց հաչել. երբ զանգակը տուին նրան, ուշադրութեամբ պատեցնում էր չորս կողմը, ըստ երևութին աշխատելով հասկանալ, թէ սրտեղից է ձայնը գալիս: Այնպէս նաև ամէն մի նոր, անձանօթ ձայնի վրայ նա զարմանում էր: Գեղեցիկ կերպով զարգարուած ծննդեան տօնածառը ամենեւին նրա զարմանքը չշարժեց, բայց յատակի վրայ պատուող հօլը զարմանքի մէջ դրեց նրան, և սկսեց հետեւել հոլին: Առաջին անգամ ձիւն եկած ժամանակ շունը շատ ծիծաղելի շարժումներ էր անում. արագութեամբ դուրս թռաւ բակը և սկսեց ձիւնը լիղել, կարծելով թէ շաքար է. բայց երբ երևաց որ կարծեցեալ շաքարը պաղ է, թաց և անհամ, նա հասկացաւ իւր սխալը: Տեսնելով իրան հայելու մէջ, դեռ 20 քայլ հեռաւորութիւնից սկսեց թռչկոտալ և կատաղութեամբ հաչել իւր աղպեւացուի վրայ, բայց մօտեցաւ թէ չէ, միանգամից հանդարտուեց,

և այն օրումանից բոլորովին դադարեց իւր պատկերը ճանաչելուց: Այս բոլորից ես հետեւեալ եղբայրացութիւնն եմ հանում. շունը դարմանում է այն բոլոր նոր բաների վրայ, որոնք նրա լսողութեանը մատչելի են. տեսանելի առարկաները նրա զարմանքը միայն այն ժամանակն են շարժում, երբ շարժողութեան մէջ են»:


Աւելացնենք և այն, որ թէ շունը շարժող առարկաներին հետեւում է, այդ նրա, իբրեւ գաղանի, բնազդն է, և ոչ թէ արտաքին զգայարանքների թելադրութիւն: Արդհետեւ ընդհանրապէս բոլոր կաթնասունները լաւ են լսում, ուստի շատ ընտանի է, որ շունը ուշադրութիւն է դարձնում ձայների վրայ և աշխատում է այն առարկաները ձեռք ձգել, որոնք ձայն են արձակում. այս գէպքումն էլ շունը երեւի ենթադրում է, որ ձայն հանող առարկան շնչաւոր է և իբրեւ կեդրոն կարող է ծառայել: Անզարգացած տեսողութեան շնորհիւ նա ուշադրութիւն չի դարձնում վառած տօնածառի վրայ, ինչպէս և իւր սեփական պատկերի վրայ:

Նման հանգամանքում բոլորովին ուրիշ կերպ են վարւում կատունները. բնութիւնից օժտուած լինելով լաւ տեսողութեամբ, նրանք ուշադրութեամբ դիտում են իրանց պատկերները հայելու մէջ: Այս բանը առաջանում է ոչ թէ կատունների շնորհից աւելի զարգացած լինելուց, այլ միայն նրանից, որ կատունները մեծ մասամբ տեսողութեամբ են ղեկավարւում, իսկ շները՝ հոտառութեամբ: Բացառութիւն են կաղմում քերծէնները, որոնք սուր տեսողութիւն ունին, բայց վատ հոտառութիւն:

Բերենք մի քանի դիտողութիւններ, թէ զանազան կենդանիներ ինչպէ՞ս են վերաբերւում պատկերներին: Կատուններից մէկը տեսնելով իրան հայելու մէջ և ուրիշ կատուի տեղ ընդունելով, առաջ աշխատում էր դուռնչով նրան դուրս քաշել, յետոյ սկսեց ապակին ճանդռտել, հայելու յետնն էր որոնում, բայց այնտեղ ոչինչ չգտնելով, նորից դարձաւ առաջուայ կողմը. վերջապէս կատաղեց և մոլեգնաբար սկսեց թաթերով հայելուն խփել, մէկով՝ առաջից, միւսով՝ յետից: Կապիկները յաճախ նկարուած միջատները իսկապէս տեղ են ընդունում, սլոկում են գրքերից և ուտում. միայն յետոյ հաշտւում են սխալի հետ և ձեռք չեն տալիս պատկերներին: Բրէմը պատմում է, որ մի կապիկ մեծ բաւականութիւն էր զգում, երբ թերթում էր պատկերազարդ գրքեր: Մի թութակ տեսնելով իրան հայելու մէջ, ըստ երեւութին ուրախացել է, գլուխը ծռել է հայելու վրայ և սկսել ինչ որ բան շշնչալ նրան: Դեղ-

ձանկիները նոյնպէս սերով նայում են հայելու մէջ և յաճախ հաւաքւում են նրա շուրջը, կարծելով թէ իրենց տեսածն ուրիշ թռչուն է: Ծեր թռչակներն իրանց պատկերը տեսնելիս բոլորովին անտարբեր են մնում. այդ բացատրւում է նրանով, որ նրանք վարժուել են տեսնելուն, ինչպէս և մարդիկ:

Այս բոլորից հետեւեալ եզրակացութիւնը կարող ենք հանել: Միայն այն կենդանիները, որոնց զգայարաններից ամենաշատ զարգացածն է տեսողութիւնը, ընդունակ են հայելու մէջ իրանց պատկերը ճանաչելու և որոշելու. իսկ որոնց ամենազլտաւոր զգայարանը հոտոտելիքն է, այդ ընդունակութիւնից զուրկ են: Ուստի և նուրբ հոտոտելիք ունեցող կենդանիներին յիմար չպէտք է համարել, որ պատկերների նկատմամբ անտարբեր են մնում: Այս հանգամանքը շատ անգամ անտես են անում, ինչպէս արել է երևելի կենդանաբան Ալֆրէդ Վրէմը:



Կէտը շատ որ ուռչի, զրօ պիտի դառնայ:

Հայհոյելով ինքդ քեզ ստորացնում ես, առանց ուրիշին լաւացնելու:

Ուղիղ տեսնելը դժուար է. բայց ժամանակին մէկ անգամ փակելն էլ հեշտ չէ:

«Այս ինչն ուղիղ հայեացքների տէր է» — ասել՝ սովորաբար նշանակում է — «իմ հայեացքների տէրը»:

Փոքր ինչ յօռետեսութիւն — բնական բան է: Չէ որ ամպերն աւելի մօտ են մեզ, քան արեգակը: